Արձանագրություն N 2
ՀԾԿՀ-17/1-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով էլեկտրոնային ձևով շրջանակային համաձայնագրերի միջոցով վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09 դեկտեմբերի 2016 թ.
ժամը 12:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Սմբատ Աղաբաբյանը, Մեսրոպ Ղարիբյանը, Գայանե Անտոնյանը, քարտուղար՝ Հայկ Կոշեցյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

ՀԾԿՀ-17/1-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը
	«Մաքսիուր» ՍՊԸ ք. Երևան, Տպագրիչների փող. 8 շենք, տարածք 1/1
	ԱԱՀ վճարող
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/
1	1 659 133,33 ԵՏՄ

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մաքսիուր» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀԾԿՀ-17/1-ՇՀԱՊՁԲ-15/1

ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Սմբատ Աղաբաբյան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Գայանե Անտոնյան
քարտուղար	_____	Հայկ Կոշեցյան